



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2009թ. երրորդ եռամսյակում /վերլուծություն/

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 40545 գործարքներ, որոնց քանակը 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 9.1%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 1.6%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2009թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 11103 օտարման գործարքների 79.2%-ը կազմել են առուվաճառքները, 19.7%-ը՝ նվիրատվությունները և 1.0%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 41.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված

անշարժ գույքի 40.9%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2009թ. երրորդ եռամսյակում, 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 10.4%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 22.8%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 69.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2009թ. երրորդ եռամսյակում, 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 40.0%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 13.5%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	երրորդ եռամսյակ 2008թ.	երրորդ եռամսյակ 2009թ.	երկրորդ եռամսյակ 2009թ.
Կենտրոն	488300	451000	469700
Արաբկիր	412700	346500	357200
Քանաքեռ-Զեյթուն	310300	266500	278500
Նոր-Նորք	278500	216400	228900
Ավան	273200	221700	227300
Էրեբունի	277100	237200	244300
Շենգավիթ	285300	230300	242200
Դավթաշեն	301800	249100	256400
Աջափնյակ	278800	226700	240000
Մալաթիա-Մեքաստիա	265500	215500	223200
Նուբարաշեն	157700	138300	134700
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	302700	254500	263900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. երրորդ եռամսյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 3.6%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1034 բնակարաններ, որոնց քանակը 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 35.9%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 12.5%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երրորդ եռամսյակ 2008թ.	Երրորդ եռամսյակ 2009թ.	Երկրորդ եռամսյակ 2009թ.
Արագածոտն	Աշտարակ	139900	135200	127200
	Ապարան	35100	44000	43800
	Թալին	44800	48100	47800
Արարատ	Արտաշատ	106000	85800	88600
	Մասիս	132400	115700	125800
	Վեդի	82500	87300	86800
	Արարատ	64500	85000	86800
Արմավիր	Վաղարշապատ	171300	157500	170400
	Արմավիր	126400	112000	119800
	Մեծամոր	85400	79500	75300
Գեղարքունիք	Սևան	100400	86400	89200
	Գավառ	49800	43000	48000
	Մարտունի	68900	80200	79000
	Վարդենիս	32800	32600	33100
	Ճամբարակ	16400	19200	18800
Լոռի	Վանաձոր	100300	91100	89300
	Ստեփանավան	47900	54500	53600
	Սպիտակ	62600	75000	73500
	Ալավերդի	32400	32000	33300
	Տաշիր	32600	35000	35500
	Թումանյան	5600	6100	6100
	Շամլուղ	3200	3400	3400
	Ախթալա	13000	14000	13900
Կոտայք	Աբովյան	176700	140000	141900
	Նոր Հաճն	132300	131500	138200
	Բյուրեղավան	110600	93500	96600
	Եղվարդ	124000	119800	121200
	Հրազդան	71400	59800	62500
	Ծաղկաձոր	161900	179400	182300
	Չարենցավան	94900	80800	84100
Շիրակ	Գյումրի	109300	106900	102600
	Արթիկ	57100	55500	57600
	Մարալիկ	27600	29500	30800
Սյունիք	Գորիս	112100	128500	123400
	Կապան	95200	106000	112000
	Սիսիան	78700	86000	89700
	Մեղրի	47800	55000	55200
	Ագարակ	29400	32800	33600
	Քաջարան	52000	57600	57600
	Դաստակերտ	7000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	78100	70000	72300
	Եղեգնաձոր	100500	108400	109600
	Ջերմուկ	130700	114200	117000
Տավուշ	Դիլիջան	101700	88700	96500
	Իջևան	131000	131100	131200
	Բերդ	40000	42300	43700
	Նոյեմբերյան	30500	33400	34500
	Այրում	21100	24000	24000

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 1.9%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 1102 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 330, մարզերում միասին վերցրած՝ 772: 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 15.9%-ով, ընդ որում, Երևանում՝ 61.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 3.3%-ով: 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 20.7%-ով, ընդ որում Երևանում աճել է 3.1%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 27.9%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	երրորդ եռամսյակ 2008թ.	երրորդ եռամսյակ 2009թ.	երկրորդ եռամսյակ 2009թ.
Կենտրոն	504300	475600	505100
Արաբկիր	436200	365800	397800
Քանաքեռ-Զեյթուն	320900	283900	309100
Նորք-Մարաշ	299100	284700	308200
Ավան	285100	237800	269000
Էրեբունի	287100	258800	283100
Շենգավիթ	291000	245800	272400
Դավթաշեն	315600	268200	297700
Աջափնյակ	295300	251800	276400
Մալաթիա-Մեքաստիա	284700	235200	261800
Նուբարաշեն	162400	143000	157000
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	316500	277300	303400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2009թ. երրորդ եռամսյակում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 8.6%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երրորդ եռամսյակ 2008թ.	երրորդ եռամսյակ 2009թ.	երկրորդ եռամսյակ 2009թ.

Արագածոտն	Աշտարակ	144100	137400	138100
	Ապարան	38200	46200	46700
	Թալին	48200	50700	52400
Արարատ	Արտաշատ	108300	89900	97600
	Մասիս	138900	130600	137700
	Վեդի	91300	90700	94300
	Արարատ	67000	88800	88700
Արմավիր	Վաղարշապատ	176400	169900	179100
	Արմավիր	128800	119500	126700
Գեղարքունի ք	Մևան	102500	90700	99300
	Գավառ	52000	50100	57000
	Մարտունի	76700	83100	84500
	Վարդենիս	35700	34900	39200
	Ճամբարակ	20900	21300	22800
Լոռի	Վանաձոր	104500	94900	98700
	Ստեփանավան	52800	57000	58900
	Սյիտակ	67000	77500	77200
	Ալավերդի	35900	34300	37000
	Տաշիր	36400	37200	39600
	Թումանյան	10200	10000	10400
	Շամլուղ	7200	7400	7400
	Ախթալա	16000	18200	18200
Կոտայք	Արովյան	190000	148400	159400
	Նոր Հաճն	138900	136900	146100
	Բյուրեղավան	114600	96800	109200
	Եղվարդ	130500	121800	130500
	Հրազդան	76600	63000	71100
	Ծաղկաձոր	253100	291800	285100
	Չարենցավան	99300	86700	93500
Շիրակ	Գյումրի	111100	111300	114500
	Արթիկ	60700	57500	64000
	Մարալիկ	32200	32200	36000
Սյունիք	Գորիս	119500	130200	128900
	Կապան	97700	110600	117100
	Սիսիան	80900	89100	96400
	Մեղրի	50300	56900	60100
	Ագարակ	32800	35400	36800
	Դաստակերտ	10400	10400	10400
Վայոց Ձոր	Վայք	81400	72300	79200
	Եղեգնաձոր	104100	111800	117800
	Ջերմուկ	91200	111600	110900
Տավուշ	Դիլիջան	109600	99700	109000
	Իջևան	132900	133100	143300
	Բերդ	41400	44000	47900
	Նոյեմբերյան	35900	35000	37900
	Այրում	22900	25800	25800

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 4.8%-ով:

Ընդհանուր առմամբ, 2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարվել են 3607 միավոր /1932.16 հա/ հողեր, որից Երևանում` 260 միավոր /49.26 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1532 միավոր /1687.79 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /2.13 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 1450 միավոր /136.52 հա/, որից Երևանում՝ 209 միավոր /11.65 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 521 միավոր /82.04 հա/, որից Երևանում՝ 38 միավոր /35.23 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 46 միավոր /12.22 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /0.25 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 32 միավոր /8.98 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 9 միավոր /0.65 հա/,
- ջրային հողեր՝ 17 միավոր /3.97 հա/:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում օտարված հողերից 3225 միավորի /1565.14 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 237 միավոր /47.98 հա/, նվիրատվության գործարքներ՝ 344 միավոր /354.44 հա/, որից Երևանում՝ 23 միավոր /1.28 հա/ և փոխանակության գործարքներ՝ 38 միավոր /12.58 հա/:

Հանրապետությունում 2009թ. երրորդ եռամսյակում, 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 40.7%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 35.4%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 44.9%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 36.4%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 406.12 հա, որից 388.11 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Վաճառված հողերի քանակի 25.5%-ը կամ 822 գործարքներ /414.79 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 75 գործարքներ /4.51 հա/, իսկ 73.9%-ը կամ 2383 միավորը /1134.77 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 161 միավոր /43.46 հա/:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 20 գործարք /15.58 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2009թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	1	0.02	58	2.83	16	1.66	10	2.13	2	0.23	131	7.70	18	33.39
Արագածոտն	35	45.89	1	5.00	7	1.06	40	2.98	120	107.68	1	0.09	86	7.52	5	0.51
Արարատ	9	15.06	15	2.20	10	0.61	54	0.58	167	128.47	1	0.26	186	15.20	17	0.31
Արմավիր	41	158.79	1	0.001	0	0.00	26	0.68	181	229.31	3	0.03	168	16.92	10	0.38
Գեղարքունիք	5	7.55	1	0.60	20	1.73	22	2.92	110	83.85	0	0.00	31	3.24	0	0.00
Լոռի	15	8.47	2	0.14	19	1.60	43	1.17	79	47.68	0	0.00	175	28.78	4	0.67
Կոտայք	46	72.53	2	0.11	27	2.10	71	1.96	274	236.38	2	0.04	247	22.37	27	4.61
Շիրակ	18	27.38	4	0.40	13	0.71	28	1.29	91	88.83	0	0.00	14	2.06	12	0.59
Սյունիք	11	24.19	2	1.56	4	0.19	31	1.24	22	14.33	2	0.15	17	1.32	8	1.07
Վայոց Ձոր	17	6.11	0	0.00	29	2.15	21	0.09	62	11.41	0	0.00	16	1.86	5	2.26
Տավուշ	1	1.00	2	0.34	21	0.91	24	4.61	15	22.39	0	0.00	12	0.66	6	1.78
Ընդամենը	198	366.97	31	10.37	208	13.89	376	19.18	1131	972.46	11	0.80	1083	107.63	112	45.57

Ստորև ներկայացվում է 2009թ. երրորդ եռամսյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	68	3.50	1	0.02	53	2.13	14	1.35	7	1.01	0	0.00	0	0.00	5	0.69	2	0.32
Արագածոտն	3	0.11	0	0.00	1	0.10	2	0.01	78	54.75	33	45.81	1	5.00	6	0.96	38	2.98
Արարատ	10	0.17	2	0.15	1	0.002	7	0.02	77	18.20	8	14.99	13	2.04	9	0.61	47	0.56
Արմավիր	5	0.04	1	0.001	0	0.00	4	0.04	59	157.29	37	156.65	0	0.00	0	0.00	22	0.64
Գեղարքունիք	3	0.23	0	0.00	3	0.23	0	0.00	45	12.56	5	7.55	1	0.60	17	1.49	22	2.92
Լոռի	10	0.70	0	0.00	6	0.56	4	0.14	69	10.68	15	8.47	2	0.14	13	1.04	39	1.03
Կոտայք	25	1.06	1	0.03	10	0.42	14	0.61	112	74.20	37	71.09	1	0.08	17	1.68	57	1.35
Շիրակ	20	1.30	0	0.00	10	0.51	10	0.79	42	26.90	17	25.81	4	0.40	3	0.20	18	0.49
Սյունիք	6	0.18	0	0.00	0	0.00	6	0.18	42	27.00	11	24.19	2	1.56	4	0.19	25	1.06
Վայոց Ձոր	3	0.01	0	0.00	0	0.00	3	0.01	64	8.34	17	6.11	0	0.00	29	2.15	18	0.08
Տավուշ	11	3.44	0	0.00	8	0.22	3	3.22	37	3.41	1	1.00	2	0.34	13	0.68	21	1.39
Ընդամենը	164	10.74	5	0.20	92	4.17	67	6.37	632	394.34	181	361.67	26	10.16	116	9.69	309	12.82

Հանրապետությունում 2009թ. երրորդ եռամսյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 17 գործարքներ /5.30 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2009թ. երրորդ եռամսյակում, 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 69.6%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 66.7%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել է 69.6%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 71.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 83.6%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 55.8%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 42.2%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. երրորդ եռամսյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մավերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մավերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	31	44.31	68.1	1244.3	263.3	90	58.49	365.0	12000.0	4357.4
Ապարան	1	1.45	46.4	46.4	46.4	9	11.88	86.5	2727.3	532.0
Թալին	1	0.05	38.0	38.0	38.0	12	11.51	93.6	5494.5	470.3
Ծաղկահովիտ						7	25.70	79.5	1000.0	238.5
Արարատի մարզ										
Արտաշատ						88	57.49	335.1	10833.3	2058.3
Մասիս	6	11.74	76.7	2100.8	567.9	33	46.82	200.0	11904.8	2929.1
Վեդի	2	3.25	119.9	293.3	206.6	39	22.30	207.0	10795.1	1808.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	23	110.26	55.2	600.0	240.6	79	64.95	294.3	9090.0	1135.0
Բաղրամյան	9	40.10	33.8	797.5	141.5	37	120.08	90.6	2561.1	638.3
Վաղարշապատ	5	6.29	5.6	550.0	289.3	59	40.18	444.4	11764.7	2740.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	2	1.19	72.7	102.4	87.6	65	7.12	199.8	1875.0	444.2
Ճամբարակ						12	8.25	60.5	953.3	237.0
Մարտունի	1	3.00	106.7	106.7	106.7	1	0.19	51.1	2850.0	564.2
Սևան	1	3.10	118.8	118.8	118.8	8	27.38	52.2	2134.8	231.8
Վարդենիս	1	0.26	618.1	618.1	618.1	24	40.92	41.2	2575.1	387.7
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.50	70.4	70.4	70.4	30	13.77	170.4	6424.2	983.8
Գուգարք	7	2.72	114.1	405.8	272.0	7	2.19	234.6	6065.9	1076.5
Սպիտակ	1	0.20	202.5	202.5	202.5	1	0.10	250.0	5555.5	583.7
Ստեփանավան	6	5.05	210.0	249.0	223.2	11	11.67	90.6	1686.6	389.6
Տաշիր						27	18.50	45.3	1384.4	200.3
Կոտայքի մարզ										
Աբովյան	10	26.80	83.2	1228.8	384.1	121	51.19	279.3	11942.7	4770.0
Եղվարդ	18	24.31	96.5	1303.1	585.9	133	174.69	174.4	11971.8	3308.9
Հրազդան	9	19.98	45.0	861.3	439.8	19	8.95	130.5	10256.4	1503.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	3.04	434.2	434.2	434.2	29	33.52	252.0	1693.1	482.0
Ամասիա	2	3.10	385.0	385.0	385.0	5	13.54	40.9	261.0	135.3

Անի	14	19.67	85.3	716.9	382.7	8	9.01	110.6	546.9	278.2
Աշոցք						19	18.32	58.5	215.8	120.9
Արթիկ						30	14.45	79.4	1428.6	233.0
Սյունիքի մարզ										
Գորիս	3	5.50	137.5	137.5	137.5	10	7.09	92.6	1023.2	468.4
Կապան	8	18.69	40.3	306.2	159.0	3	1.30	120.0	841.6	277.5
Մեղրի						5	1.97	193.0	3000.0	585.8
Սիսիան						4	3.97	46.3	1977.4	289.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	17	6.11	34.4	986.0	197.0	48	9.83	125.0	10000.0	1492.3
Վայք						14	1.58	58.8	1430.7	500.0
Տավուշի մարզ										
Բերդ						5	2.21	213.3	3783.8	496.7
Իջևան						2	0.59	267.5	9454.5	1000.0
Նոյեմբերյան	1	1.00	149.8	149.8	149.8	8	19.59	46.7	7368.4	736.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2009թ. երրորդ եռամսյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0թմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0թմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Մտավերագրյալ	Միջին			Նվազագույն	Մտավերագրյալ	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						73	61076.7	130.7	22200.0	2570.5
Ապարան	4	7778.0	73.3	483.4	254.0	10	10618.0	124.1	609.6	245.7
Թալին	2	1800.0	107.3	208.3	157.8	3	3540.0	63.2	1454.8	131.4
Ծաղկահովիտ								60.0	214.3	76.5
Արարատի մարզ										
Արտաշատ	3	3000.0	532.0	533.0	532.3	36	31213.5	173.9	7140.3	892.0
Մասիս	5	3050.0	541.5	2995.6	1376.7	108	76145.0	187.5	25000.0	1220.0
Վեդի	1	35.4	1064.8	1064.8	1064.8	40	40406.0	126.1	5000.0	660.2
Արմավիրի մարզ										
Արմավիր						38	38087.8	131.6	9090.9	1214.0
Բաղրամյան						3	7592.0	100.0	833.3	173.4
Վաղարշապատ						127	123495.0	197.4	26528.4	1537.6
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	8	9680.0	174.2	183.3	179.0	10	9055.0	186.6	1084.3	435.9
Ճամբարակ						3	3341.0	71.3	2286.2	126.4
Մարտունի	5	2024.0	113.1	118.4	116.5	9	10340.0	119.3	5000.0	273.0
Սևան	4	3216.0	393.3	466.0	429.3	6	4898.5	240.0	3110.4	211.1
Վարդենիս						3	4716.0	72.5	987.2	144.3
Լոռու մարզ										
Ալավերդի	2	776.0	609.5	891.0	750.3	7	7989.0	114.3	1388.9	188.6
Գուգարք	8	6401.0	51.0	5655.4	1189.5	10	5566.0	77.9	14083.3	702.8

Մայիտակ	3	3271.0	61.5	121.4	101.3	153	198627.0	104.9	1348.3	182.6
Ստեփանավան						5	75599.0	88.2	1666.7	136.7
Տաշիր								45.3	400.0	76.6
Կոտայքի մարզ										
Արովյան	6	3981.0	182.5	3166.9	2109.3	134	123191.0	264.5	35353.5	2050.7
Եղվարդ	4	7305.0	226.0	243.4	228.7	87	74663.0	173.6	27000.0	2719.9
Հրազդան	7	5500.0	38.6	1070.0	514.6	25	25423.0	117.7	34848.5	1348.7
Շիրակի մարզ										
Ախուրյան						10	10430.0	113.6	18750.0	330.0
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	3	2000.0	130.0	425.0	252.5			67.9	180.6	115.2
Աշոցք						1	6130.0	40.8	144.0	59.4
Արթիկ						3	4042.0	111.8	5000.0	216.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	370.0	1150.0	1150.0	1150.0	10	5753.0	112.2	1700.0	281.8
Կապան	3	1496.0	805.0	1801.4	1449.9	2	1647.0	67.9	2638.9	224.0
Մեղրի						5	5823.0	68.5	632.9	142.4
Սիսիան								123.5	875.0	156.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	4950.0	376.2	765.0	631.3	6	8520.0	96.7	7659.6	384.5
Վայք	22	16500.0	854.0	854.0	854.0	10	10107.0	120.7	1448.3	150.1
Տավուշի մարզ										
Բերդ						1	70.0	75.8	810.0	93.9
Իջևան	10	6695.0	165.0	2300.0	1232.0	10	5808.0	74.1	14423.1	479.2
Նոյեմբերյան	3	149.0	600.0	1330.0	1085.0	1	720.0	125.0	1948.1	163.0

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են նախկինում անհատույց սեփականաշնորհման 28 գործարքներ 3.95 հա մակերեսով, ընդ որում 26-ը՝ /3.39 հա/ Լոռու և 2-ը՝ /0.56 հա/ Շիրակի մարզերում:

2009թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3302 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 8.1%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 84.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2009թ. երրորդ եռամսյակում, 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 16.7%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ աճել՝ 17.2%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 139 բնակարանների, 103 անհատական բնակելի տների, 1067 հասարակական, 142 արտադրական նշանակության օբյեկտների, 1539 միավոր /9596.33 հա/ հողերի և 312 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2009թ. երրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 35 վարձակալության գործարքների, այդ թվում 17 միավոր /0.26 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 80.8%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 48.5%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալված 9596.33 հա հողերից 9.76 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 9586.57 հա հողերի 126.76 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 74.77 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 3256.66 հա, որից 3256.06 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2629.07 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2009թ. երրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	3	155.77	46	172.90
Արարատ	7	1020.02	173	524.78
Արմավիր	0	0.00	19	86.74
Գեղարքունիք	5	574.26	438	1571.76
Լոռի	2	700.00	27	271.93
Կոտայք	0	0.00	21	12.75
Շիրակ	2	9.00	177	718.94
Սյունիք	7	170.02	91	3086.04
Վայոց Ձոր	0	0.00	24	276.39
Տավուշ	0	0.00	4	15.64
Ընդամենը	26	2629.07	1020	6737.87

2009թ. երրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4400 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.9%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ, աճել է 32.9%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 39.6%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.9%/, առանձնատների /22.6%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.8%/ և հողերի /10.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2132 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 44.4%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 25.6%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 721.20 հա հողեր, որից 52.40 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 75.4%-ը, կամ 544.07 հա, գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից 0.28 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Կոտայքի մարզում՝ 197.33 հա, որից 189.53 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 281 գործարքներ, որից 211-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 81.1%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 9.3%-ը՝ անհատական բնակելի տների, 5.3%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 2.5%-ը՝ այգետնակների և 1.8%-ը՝ հողերի նկատմամբ: 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ, հիփոթեքային գրավադրման

գործարքների քանակն աճել է 72.4%-ով, ընդ որում Երևանում՝ 93.6%-ով, մարզերում միասին վերցրած՝ 29.6%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել է 54.5%-ով, ընդ որում Երևանում՝ 49.0%-ով, մարզերում՝ 65.7%-ով:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 7 և 4 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.03%: 2009թ. երրորդ եռամսյակում, 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակն աճել է 22.2%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 56.0%-ով: 2009թ. երրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների 27.3-ական% արձանագրվել են Արարատի և Կոտայքի, 18.2% Գեղարքունիքի և 9.1-ական%՝ Արագածոտնի, Սյունիքի և Տավուշի մարզերում:

2009թ. երրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 6325 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2009թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 11.1%-ով, իսկ 2008թ. երրորդ եռամսյակի համեմատ՝ 7.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /31.7%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն